

բուրժուաները և որոնց մութ գիտակցութեան մէջ մի քիչ արշալոյս, բռնադատուած հոգիներէ մէջ մի քիչ երաժշտութիւն, խարխափող ուղեղների մէջ մի քիչ ներգաշնակութիւն ծագեցնելու պարտաւոր է իւրաքանչիւր ինքնաճանաչ ինտելիգէնտը: Կեանքի տարրական վայելքներից զրկուած պարիային, պրոլէտէրին չզրկենք նաև Խօսքի մխիթարութիւնից, արուեստի աստուածային հաճոյքներից...

Իսկ եթէ մենք դեկավարուենք «արուեստը արուեստի համար» տեսութեամբ, եթէ արուեստագէտը աղատագրենք իր որոշ պարտականութիւններից դէպի հասարակ, ցաւատանջ ժողովուրդը, պիտի խոստովանուենք, որ սէմբոլիստը գեղարուեստական յուզումի մի աղբիւր է, ինչպէս ամեն ստեղծագործ ուժ: «Հայորդիները» բաղկանում են հինգ երգերից «Անդրաշիկ», «Խրիմեան Հայրիկ», «Աղբիւր-Սերոբ Վարդանեան», «Զրդշումին Թափորը», «Հողիւն Ձայնը»:

Սիւսանթօ երգում է ըմբոստացումը: Նա փառաբանում է նրանց, որոնք կուռեցին և ընկան հերոսաբար նուիրական Դատին համար: Ողբում է այն եղբրական ու անյուր ճակատագիրը, որ հալածում, հալածում է մեր ցեղը, դարերից ի վեր: Նրա բոլոր երգերն էլ պտտում են մեր ժամանակակից, նորագոյն պատմութեան շուրջը:

Տ. Զաւէն

Հեղինակ Մելիք Հայկազեան: «Մի պոյս» ժապոնում 1905, Թիֆլիս, 40 կ.:

Այս բողեկոս չկայ մի բառ որ մարդկային երևակայութեան խօսի այնքան ուժգնօրէն որքան Տոգօների և Օյամաների հայրենիքը:

Ճապոնիւն...

Ահա այս տարօրինապէս գրաւիչ երկրում կատարած ճամբորդութեան յիշատակներն է որ մեզ պատմում է օր. Հեղինէ Մելիք-Հայկազեան: Ճապոնիայի մասին վերջին ժամանակներս շատեր են գրել և խօսել, բայց օր. Մելիք-Հայկազեանի «Մի պոյսը» մասնաւորապէս շահագրգռում է ընթերցողին իր ինքնատիպ, նուրբ, խոր գիտողութիւններով: Գիրքը՝ ծայրէ ծայր կարդացւում է մեծ հաճութեամբ: Հեղինակուհին ոչ միայն գիտէ գիտել, այլ և իր գիտածը ցայտուն կերպով արտայայտել: Նա՝ պատմութեան թեթև ու ակտիվ ձևին տակ մեզ ցոյց է տալիս ճապոնացուն իր ամեն երեսներով՝ իր ներքին և արտաքին կեանքում, իր բարքերի, սովորութիւններ-

րի, իր կրօնական, բարոյական, իմացական ըմբռնումների և հասկացողութիւնների մէջ:

Այդ հիանալի ժողովուրդը, որի վրայ ամբարտաւան Եւրոպան նայում էր երկար ժամանակ արհամարհանքով՝ իր մէջ թագնում է մեծ ազգի բոլոր ուժեղ յատկութիւնները: Մինչդեռ եւրոպացիին իր ըթից այն կողմ չէ տեսնում, ճապոնացին հետաքրքրւում է ամեն բանով, նա ճանաչում է նոյնիսկ հային: Այս մասին շատ բնորոշ է այն՝ ինչ պատմում է օր. Մելիք-Հայկազեան: Օրէորդը Կիօտօյում մի ճապոնացու տան հիւր է: Մտնում է տանտէրը մի վայելահասակ, գեղեցիկ ճապոնացի: Փոխադարձ բարենեւրից յետոյ, այսինքն ձեռները ծնկներին վրայ դրած՝ խոր գլուխ տալուց յետոյ, տանտէրը իր ուրախութիւնն է յայտնում որ հիւրը պատիւ է արել իր տունը այցելելով:

«Յետոյ հարցրեց ազգութիւնս, և երբ իմացաւ, թէ հայ եմ, խիստ զարմացած՝ աչքերը չոեց ու հարցրեց վարանումով.

—Ա՞յն հայերից, որոնք շարունակ թուրքերի դէմ կուում են:

Հիմա էլ զարմանալու հերթը իմս էր:

—Ա՛խ միթէ դուք լսել էք հայերի մասին:

—Ի՞նչպէս չէ. յիշում եմ մի քանի տարի առաջ կոտորածներ կային, եթէ չեմ սխալւում: Այստեղ մի ինչ որ միսիօնար փող էր հաւաքում ձեզ ուղարկելու համար: Հիմա ի՞նչ վիճակի մէջ է ձեր երկիրը:

Ես նայում էի նրա երեսին ու չգիտէի, ի՞նչ պատասխանեմ, ուրախանամ թէ տխրեմ, որ մեր մեծ ցաւերի ալիքները մինչև ճապոնական կղզիներն էին հասել:»

Դժբանստ ժողովուրդ, որ քո ողբերգական անօրինակ ճակատագրով Ասիայի ամենախուլ անկիւններում անգամ տրտմօրէն հռչակուեցիր:

2.

Մ. Սերաօ, «Մամուլում մօռ». «Էփերզին խօսք». Թարգմ. ? հրատ. տիկին Զարէլի. 1905, Պետերբուրգ, 7 կոպէկ.

Վերջին տարիների հրատարակութիւնների շարքում բազմաթիւ դատարար ուղադրութեան արժանի են տիկին Զարէլիները, որոնք լոյս են տեսնում Պետերբուրգում և աչքի են ընկնում իրանց մաքուր տպագրութեամբ և լաւ թղթով: Բացի արտաքինից, հրատարակչուհին ուշք է դարձնում և նիւթերի ընտրութեան վրայ: